

ՔՐԻՍՏԻՆԵ ԿՈՍՏԻԿՅԱՆ

ՔԱՇԱԹԱՂԻ 17-ԴԴ ԴԱՐԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆԸ ՎԵՐԱԲԵՐՈՂ ՄԻ ՓԱՍՏԱԹՈՒԹՅՈՒՆ

15–17-րդ դարերում Մյունիքի Քաշաթաղ գավառում իշխել են Մելիք–Հայկազյանները, որոնց են վերագրվում նույնանուն ավանում և Խնածախում հայտնաբերված մելիքական ապարանքները¹: Այդ տոհմի մեզ հայտնի առաջին ներկայացուցիչը 15-րդ դարում ապրած Մելիք Հայկազ I-ն է²: Մինչև 1930-ական թթ. պահպանվել էր նրա որդի և ժառանգ Հախնազար իշխանի տապանը (1551թ.)³: Այս տոհմի առավել ակնառու ներկայացուցիչը Մելիք Հայկազ II-ն էր, որը տիրում է իր հոր մելիքական իրավունքներին 1551թ. մինչև 1623թ.⁴: Առաքել Դավրիժեցին հիշատակում է նրա անունը Շահ Աբաս I-ի արքունիքի հայերի թվում, որպես «խորհրդական ու նշանավոր»⁵: Մ.Հասրաթյանի ենթադրությամբ «Հայկազ II-ը 10–15 տարի վտարանդու կյանք է վարել Իրանի խորքերում 80-ական կամ 90-ական թթ. հեռանալով թուրք-օսմանական ժամանակավոր և դաժան տիրապետությունից: Օսմանական բանակների Անդրկովկասի արդի տարածքից վտարելուց հետո, 1606–1607թթ. շահի հավատարիմ հերոս սիրելիներից մեկը դարձած Մելիք Հայկազը, որը Քաշաթաղից դուրս ևս իրավունքներ է ստանում»⁶: Այդ իշխանավորի մելիքական իրավունքի ու ժառանգական տիրույթների հաստատմանն են վերաբերում Շահ Աբաս I-ի կողմից 1609թ. և 1620թ. նրան տրված երկու հրովարտակները⁷: Նշված Մելիք–Հայկազյանների ու նրանց հաջորդների անունները արձանագրված են Քաշաթաղի վիմագրական նյութերում⁸:

Ամենայն հավանականությամբ Մելիք–Հայկազյանների հետագա ժառանգներին է վերաբերում սույն հոդվածով ներկայացվող (ՊԿՊԱ, ֆոնդ 59, ցուցակ 1, գործ 1, էջ 4) պարսկերեն փաս-

տաթուղթը: Այն գրվել է 1691/2թ. և իրենից ներկայացնում է Քաշաթաղի Մելիք Հախնազարի, մի շարք գյուղերի տանուտերերի շարիսթական դատարանով կնքված համախոսական դիմումը պարսից արքունիքին: Այդ դիմումով նրանք իրենց լիազոր ներկայացուցիչ են նշանակում Մելիք Հախնազարի որդի Իյասին (կամ Էլիաս, որը թերևս Եդիաս անվան աղավաղված ձևն է) և քեդխուդա Գիքորին, որոնք պետք է պարսկական արքունիք ներկայացնեին նշված շրջաններում ծագած խնդիրները և պաշտպանեին տեղի բնակչության շահերը:

Մելիք (կամ Պարոն) Հախնազարի ու վկաների թվում (տես - ներքևում, 6-րդ վկա) հանդես եկող նրա եղբայր Հայկազի անունները նշվում են Մերիկ գյուղի սբ. Աստվածածին եկեղեցու մուտի ճակատակալ քարի վրայի 1682թ. արձանագրության մեջ⁹, որը կասկած չի թողնում պարսկալեզու փաստաթղթի հավաստիության վերաբերյալ:

Նշված փաստաթղթում արձանագրված Քաշաթաղի հայ մելիքի և մի շարք բնակավայրերի հայ տանուտերերի անունները ակնհայտ են դարձնում այն հանգամանքը, որ դեռ 17-րդ դարի վերջին, այդ շրջանը եղել է հայաբնակ, ու միասնաբար, հայ մելիքների գլխավորությամբ պաշտպանել իր շահերը պարսից կառավարության առաջ:

Պարսկերեն այս արժեքավոր վավերագիրը գտնվում է կիսաքայքայված վիճակում, որի պատճառով նրա առանձին հատվածներ մնում են անվերծանելի:

Թարգմանություն

ՊԿՊԱ, ֆոնդ 59, ցուցակ 1, գործ 1, էջ 4
մեծ. 23619,5սմ, գիր՝ շիքասթե-նասթաալիղ

Քուշթասիֆ¹⁰ մահալի¹¹ մելիքը և քեդխուդաները¹², որոնց անուններն են.

[...]* մահալի Մելիք Հախնազար [կնիք՝ արաբատառ]
Հալաք գյուղի ներկայացուցիչ քեդխուդա Անդրիաս
Բայանդուր գյուղի ներկայացուցիչ քեդխուդա Ամիր Խաչեն

(*)

Վաղազադուն (**) գյուղի ներկայացուցիչ քեդխուդա [...] *
Մուարան(ց) գյուղի ներկայացուցիչ քեդխուդա Մարտիրոսը

Ղուշչի գյուղի ներկայացուցիչ քեղխուդա [...]*,
Մերիկ գյուղի ներկայացուցիչ քեղխուդա Պողոս,
Հարար գյուղի ներկայացուցիչ քեղխուդա Սեյբում,
Աֆաթխար¹³ գյուղի ներկայացուցիչ քեղխուդա Առաքել
[կնիք՝ հայատառ],

Մինքենդ գյուղի ներկայացուցիչ քեղխուդա Իսախան [կնիք՝
արաբատառ],

Փուլ գյուղի ներկայացուցիչ քեղխուդա Հակոբ [կնիք՝ արա-
բատառ],

Հոչաս (Հոչանց) գյուղի ներկայացուցիչ քեղխուդա Պետրոս
[կնիք՝ արաբատառ],

Յալոուզդան գյուղի ներկայացուցիչ քեղխուդա Սարգիս

Արավիս¹⁴ գյուղի ներկայացուցիչ քեղխուդա Պետրոս,

որոշեցին, շարիաթի դատարանով քննեցին ու սարքար-ե
խասսե-ե շարիֆեի¹⁵ կառավարչին տեղեկացրին, որ նշված մա-
հալը ամբողջովին և իրենցից յուրաքանչյուրը իր կամքով ու հա-
մաձայնությամբ բարեպաշտ քրիստոնյա Իյասին՝ Մելիք Հախ-
նազարի որդուն ու քեղխուդա Գիքորին դարձնում են իրենց լիա-
զոր ներկայացուցիչը, որպեսզի նրանք իրենց օրինական պա-
հանջներն ու խնդիրները հասցնեն խասսե-ե շարիֆեի վերահսկչի
բարձրագույն ատյանին: Եվ ինչ հարցով էլ, որ նշված ներկայա-
ցուցիչները դիմեն բարձրաստիճան պաշտոնյաներին, իրենք հա-
մաձայն են, և սույն գրությունն արտահայտում է իրենց կամքը:
Գրվել է 1103 հ.թ. մուհարամ ամսին¹⁶:


1. Գրությունը իրականությանը համապատասխանում է. [անվեր-
ծանելի կնիք]
2. Գրությունը իրականությանը համապատասխանում է. [Ալիի
հետևորդ Ադա Միրզա]
3. Գրությունը չի հակասում իրականությանը. Ալի Վերդի Դիզա-
կի. [նրա անվամբ կնիք],
4. Իրականությունն այնպիսին է, ինչպես գրված է. [կնիքը
ջնջված է],
5. Գրությունը հաստատում է Ղափանի Մելիք Հայկազը, [նրա
անվամբ կնիք],
6. Գրությունը հաստատում է Մելիք Հախնազարի եղբայր Հայ-
կազը. [նրա անվամբ կնիք],

7. Վկայում են, որ իրականությունը գրությանը չի հակասում.
[Մանուչեհր անվամբ կնիք]
8. Վկայում են իրական լինելը. [անվերծանելի կնիք],
9. Իրականությունն այսպիսին է. [անվերծանելի կնիք],
10. Գրության բովանդակությունը իրական է և ճշմարտացի. Գուշ-
թասֆի Արդ-ալ-Զերին. [նրա անվամբ կնիք],
11. Իրականությունն այսպիսին է և չի հակասում գրությանը. Միր-
զա Ալիի ծառա Մուհամմադ Ռ-ազի. [նրա անվամբ կնիք],
12. Իրականությունն այսպիսին է և չի հակասում գրությանը. Գուշ
Ալի Խան Մուսուլմանան. [նրա անվամբ կնիք],
13. Հաստատում են այս գովելի գրությունը. [Մանուչեհր անվամբ
կնիք],
14. Հաստատում են այս գովելի գրությունը. [Մուհամմադ Յուսուֆ
անվամբ կնիք],
15. Իրականությունն այսպիսին է. [Ալիի հետևորդ Թուֆան],
16. Գրությունը իրական է, ուստի հաստատում են. [անվերծանելի
կնիք],
17. Իրականությունը ճիշտ այսպիսին է. [անվերծանելի կնիք],
18. Իրականությունը ճիշտ այսպիսին է. [անվերծանելի կնիք],
19. Իրականությունը այնպիսին է, ինչպես գրված է. [Մուհամմադի
ստվեր Բահրամ],
20. Գրությունը գործի է դրվել [անվերծանելի կնիք]:

KRISTINE KOSTIKYAN

A DOCUMENT OF THE 17TH CENTURY QASHATAGH HISTORY

The Persian document examined in the article is a kind of common application addressed to the court of Shah Soltan Huseyn, confirmed by a number of Armenian and Moslem high-officials and noblemen. It is written on behalf of Melik Hakhnazar of Kashatagh, most likely from the noble family of Melik-Haykazyans and the Armenian village-elders of that region. The document is firm evidence, that this region of Siwnik, which corresponds to nowadays Kashatagh (Lachin) region of the Republic of Karabagh, had Armenian population on the whole at the end 17th century, making joint efforts to protect its rights before Persian administration.



Հրովարտակի բնագիրը:

و دربار گردید و اصرار شروع ملک و گدازان محال گشتند و سرپرست ناصر پهلوت سرکار خاصه شریفه

که اسامی ایشان در ذیل است

ملک حقیقت ملک محال [...] [مهر]

گدازان اندرونی و عده قریه ملک

گدازان [...] و عده قریه بایندور

گدازان [...] و عده قریه و غمخایان

گدازان مروری و عده قریه سوران

گدازان [...] و عده قریه قوشچی

گدازان بومس و عده قریه مرگ

گدازان ملکوم و عده قریه مرر

گدازان [...] و عده قریه عافتخر [مهر]

گدازان عساکران و عده قریه مین کند [مهر]

گدازان حقوب و عده قریه پول [مهر]

گدازان بومس و عده قریه موچاس

گدازان سرکی و عده قریه بالقرنم

گدازان پارس و عده قریه لویس افاده

بدانکه چون ممی و تمامی محال فوق پرشا و رغبت خوشان بنیده اسماء و یون الهاس ولد

ملک حویضر و گدازان گنگور محال مزبور فوق را وکیل مطلق نمودند که ملاک حسنی و مدعا

ایشان را بدوای عالیجاه ناصر پهلوت سرکار خاصه شریفه عرض و استدعا نموده قبول ایشان

است و هر چه موکلان مزبور در خدمت بدوایشان عظام عرص کرده و مطلب حسابی که بر آنها

صورت نامه میگی راضی و موافق هستند تحویلا فی شهر محرم الحرام ۱۱۰۲

۱ بموجب که در این دستور قسمه مثال واقع است [مهر]

۲ بموجب که در این دستور قسمه مثال واقع است عند علی آقا میرزا

۳ به این بموجب همیت است خلائی ندارد علی زیدی نیزانی [مهر]

۴ بموجب به این قسمی است [مهر]

۵ بموجب که در این دستور قسمه مثال واقع است ملک هکس

۶ بموجب هکس برابر ملک هکس گشتند [مهر هکس]

۷ بموجب به این بموجب است خلائی ندارد [مهر بموجب]

۸ بموجب به این بموجب است [مهر]

۹ بموجب به این بموجب است خلائی ندارد [مهر]

۱۰ بموجب که در این دستور قسمه مثال واقع است خلائی ندارد میرزا علی [مهر]

۱۱ به این بموجب حقیقت است خلائی ندارد محمودی ملازم میرزا علی [مهر]

۱۲ بموجب حقیقت است خلائی ندارد کل اربان مسلمانان [مهر]

۱۳ بموجب به این بموجب است خلائی ندارد [مهر]

۱۴ بموجب به این بموجب است خلائی ندارد [مهر]

۱۵ بموجب به این بموجب است خلائی ندارد [مهر]

۱۶ بموجب به این بموجب است خلائی ندارد [مهر]

۱۷ بموجب به این بموجب است خلائی ندارد [مهر]

۱۸ بموجب به این بموجب است خلائی ندارد [مهر]

۱۹ بموجب به این بموجب است خلائی ندارد ملک محمد بهرام

۲۰ بموجب به این بموجب است خلائی ندارد [مهر]

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՎԵՐՈՒՆԱՆՈՒԹՅԱՆ:

1. Այդ ապարանքների մասին տե՛ս Ա. Ղուլյան, Արցախի ու Սյունիքի մելիքական ապարանքները, Երևան 2001, էջ 17, 23:
 2. Մ. Հասրաթյան, Պատմա-հնագիտական ուսումնասիրություններ, Երևան 1985, էջ 158:
 3. Նույն տեղում, էջ 162:
 4. Նույն տեղում, էջ 163:
 5. Առաքել Դավրիժեցի, Պատմություն, Երևան 1988, էջ 176:
 6. Մ. Հասրաթյան, նշվ. աշխ., էջ 165:
 7. Մատենադարանի պարսկերեն վավերագրերը, հրովարտականեր, պրակ II, (1601-1650թթ.) Երևան 1959, էջ 89, 99:
 8. Ս. Կարապետյան, Հայ մշակույթի հուշարձանները Խորհրդային Ադրբեջանին բռնակցված շրջաններում, Երևան, 1990, էջ 131, 134, 149; Ալ. Հակոբյան, Հակաբրիի վերնահովտի նորահայտ վիմագրերը, Հանդես ամսօրեայ, Վիեննա 1998, 1-12, էջ 283:
 9. Ս. Կարապետյան, նշվ. աշխ., էջ 134:
 10. Պարսկական հրովարտականերում Քաշաթաղ գավառը նշվում է այդ անվամբ (տե՛ս Մատենադարանի պարսկերեն հրովարտակաները, պրակ 2, էջ 89, 100, 124):
 11. Մահալ «(արաբ.) — «մահալ» (վայր) քառի հոգնակին է, որ քառացի նշանակում է «վայրեր», քայց այն հաճախ գործ էր ածվում «շրջանի» իմաստով», (տե՛ս Մատենադարանի պարսկերեն վավերագրերը, պր. 1, էջ 113):
 12. Քեդխտղա (պարսկ.) — «Այսպես էին կոչվում գյուղական ավազները: Սակայն չպետք է հասկանալ միայն գյուղի «գեղջավազի», «տանտներ» կամ «ռեսի» իմաստով: Մի գյուղում կարող էին լինել մի քանի քեդխտղաներ, դրանք փաստորեն գյուղի ավազների խորհրդի անդամներն էին, և այդ անունը ստացել էին երբևէ գյուղի տանտներ եղած ժամանակ: Այդ պաշտոնից ազատվելուց հետո էլ նրանք շարունակում էին կոչվել քեդխտղաներ ու մանակցում էին ավազների խորհրդին» (Մատենադարանի պարսկերեն հրովարտակաները, պրակ 1, Երևան 1956, էջ 122):
- * Չի ընթերցվում մեկ քառ:
13. Աղքաթխեր գյուղն է, որը գտնվում է «Աղաւնոյ վտակի վերնահովտում, Իշխանասարի հիւսիսային լանջերի աղբիւրներից ձեւատրոտող եւ շուրջ 10կմ զուգահեռ հոսող երկու օժանդակների միջեւ հարաւից հիւսիս ձգուող սարահարթի վերջին մասում, Աղաւնոյի ափից 2 կմ հարաւ-արեւմուտք, Հակ գիւղից Իշխանասարի աղբիւրները գնացող դաշտային ճանապարհով 4 կմ հարաւ, ծովի մակերեսից 1650մ բարձրութեան վրայ» (տե՛ս Ալ. Հակոբյան, Հակաբրիի վերնահովտի նորահայտ վիմագրերը, Հանդես ամսօրեայ, Վիեննա 1998, 1-12, էջ 270-271):
 14. Սյունիքի Հաքանդ գավառի հյուսիսում, Տեղ գյուղից քիչդիպի արևմուտք (տե՛ս Ղ. Ալիշան, Միսական, քարտեզ):
 15. Խասսե-ե շարիֆ — «(արաբ.) Այսպես էին կոչվում արքունի կալվածները, արհեստանոցներն ու գործատները, և առհասարակ, շահին ու

թագավորական ընտանիքին պատկանող մյուս բոլոր հաստատույթները միասին վերցրած: Դրանք բոլորն ունեին հատուկ պորտեթի կառավարություն, որ կոչվում էր «Սարքար-ե խասսե-ե շահիճե» (Մատենադարանի պարսկերեն հրովարտակները. պրակ 1. Երևան 1956, էջ 110):

16. Համապատասխանում է 1691ր. Գոյեմբերի ամսին: